ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Դեկտեմ. 23. Թ. 819 Սինոդը լսեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի 1191 Թ. օգոստոսի 8-ի № 3729 յայտարարութիւնը Աղեքսանդրապոլի գաւառի Ղազարան գիւղացի Մարտիրոս Տէր Յովհաննիսեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. Թոյլ տալ Վրաստանի Հայոց Կոնսիստորիային ընդունել յիշեալ Տէր Յովհաննիսեանին հոգևոր կոչման մէջ և յանձնարարել Թեմի ժամանակաւոր կառավարչին ձեռնադրելու նորան քահանայ Բորչալուի գաւառի Ղամշլուտ գիւղի համար.

Դեկտ. 23. Թ. 820 Սինոդը լսեց Երևանի Կոնսիստորիայի 1911 Թ. հոկտեմբերի 27-ի № 7866 յայտարարութիւնը Աղեքսանդրապոլի գաւառի Սողուտլի գիւղացի Մարգար Նոյն և Միրաքեան Խալաթեանին քահանա ձեռնադրելու մասին, որոշեց. Թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային ընդունել Մարգար Խալաթեանին հոգևոր կոչման մէջ և յանձնարարել փոխ-Թեմակալին ձեռնադրել նորան քահանայ Կարսի վիճակի Արագին գիւղի համար.

Դեկտ. 23. Թ. 821 Սինոդը լսեց Աստրախանի Կոնսիստորիայի 1911 Թ. նոյեմբ. 30-ի № 3788 յայտարարութիւնը Արմաւիրցի Գէորգէ Կուսիկեանցի և Մարգարիտ Զաքուբեանցի չհաս պսակի Թոյլտուութեան մասին. որոշեց. Թոյլ տալ Գէորգէ Մինասեան Կուսիկեանցի և Մարգարիտ Յակոբեան Զաքուբեանցի պսակը ազգականութեան վեցերորդ աստիճանում, խորթութեամբ մօրից, այս մասին հրաման տալ Աստրախանի Կոնսիստորիային.

Դեկտ. 23. Թ. 822 Սինոդը լսել Երևանի Կոնսիստորիայի 1911 Թ. մարտի 8-ին № 1317 յայտարարութիւնը Աղեքսանդրապոլի գաւառի Բզովդալ գիւղացի Ս. Ետիս Տէր Դաւթեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. Թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչ-

ման մէջ Աւետիք Տէր Դաւթանին և յանձնարարել փոխ-թեմական ձեռնադրել նորան քահանայ Բզովդալ գիւղի համար։

Դեկտ. 23. թ. 823 Մինոգը լսեց Երևանի Կոնսիստորիայի 1911 թ. յունիսի 30-ի № 4908 յայտարարութիւնը Զանգեզուրի գաւառի Սևարանց գիւղի բնակիչ Հայրապետ Մանուչեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Հայրապետ Մանուչեանին և յանձնարարել Երևանի փոխ-թեմական ձեռնադրել նորան քահանան Սևարանց գիւղի համար և ձեռնադրութեան մասին յայտնել Տփխիսի բրիգադային պետին, նորա անունը պահեստի զինուորների ցուցակից հանելու համար։

Դեկտ. 23. թ. 824 Մինոգը լսեց Ղազախի գաւառի Դուեղ գիւղի ծխական հոգաբարձութեան 1911 թ. մայիսի 31-ի խնդիրը, յիշեալ գիւղի ս. Սարգիս ուխտատեղու արգիւնքը փոխանակ Բարանա գիւղի դպրոցին տալու, իրանց գիւղի դպրոցին յատկացնելու մասին, որոշեց. ի նկատի առնելով, որ Մինոգը 1911 թ. հոկտեմբ. 12-ի օրագրով յատկացրել էր ս. Սարգիս ուխտատեղու արգիւնքը Դուեղ գիւղի եկեղեցական-ծխական դպրոցին, հիմնուելով սխալ տեղեկութիւնների վրայ, որ հաղորդել էր Վրաստանի Հայոց Կոնսիստորիային Ղազախի Բ. մասի գործակալ Մարտիրոս քահանայ Տէր Ցարութիւնեանը, ուստի նախ փոխել հոկտ. 12-ի այդ վճիռը և զօրութեան մէջ թողնել 1908 թ. օգոստոսի 8-ի վճիռը, նորից յատկացնելով ուխտատեղու արգիւնքը Բարանայի Հայոց եկ.-ծխական դպրոցին, ժամանակաւորապէս, այն պայմանով, որ հոգաբարձութիւնը ժողովելով ուխտատեղու արդիւնքը, կատարէ ուխտատեղու նորոգութիւնները և պահէ ուխտատեղին վայելուչ դրութեան մէջ և ապա արդիւնքի մնացորդը գործադրէ դպրոցի վերայ։ Եւ երկրորդ՝ գործակալ Մարտիրոս քահանային այս խնդրի առթիւ սխալ տեղեկութիւններ հաղորդելու համար — յանդիմանել։

Դեկտ. 23. թ. 825 Մինոգը որոշեց պատուիրել Ատրախանի Կոնսիստորիային կարգադրել մկրտել Ատրախան քաղաքի բնակչուհի հրէուհի Պէսէ-Ռէյզէ-Լինդէրին, համաձայն նորա խնդրի. Հայ եկեղեցու ծիսով, պահպանելով բոլոր այն կարգերը, որ սահմանուած են հրէաների մկրտութեան վերաբերմամբ։

Դեկտ. 26. թ. 834 Մինոգը լսեց Երևանի փոխ-թեմակալի 1911 թ. նոյեմբերի 10-ի № 2138 յայտարարութիւնը, որով միջնորդել էր Երևանի գաւառի Թամամլու գիւղի նորակառոյց եկեղեցու համար եկեղեցական գրքեր նուիրել, որոշեց. Երևանի փոխ-թեմակալի միջնորդութեան համաձայն, պատուիրել Մայր Աթոռի տպարանի վարչութեանը տալ յիշեալ գիւղի եկեղեցու համար կարևոր եկեղեցական գրքեր փոխ-թեմակալի ցուցման համեմատ։

Դեկտ. 28. թ. 837 Մինոգը լսեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի 1911 թ. օգոստոսի 16-ի № 3844 յայտարարութիւնը Աղէքսանդրապոլի գաւառի Համամլի գիւղի բնակիչ Յովհաննէս Տէր Կարապետեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Վրաստանի Հայոց Կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ յիշեալ Տէր Կարապետեանին և առաջադրել Վրաստանի թեմի ժամանակաւոր կառավարչին ձեռնադրել նորան քահանայ Հօռուայ վիճակի Մադիբագդի գիւղի համար։

Դեկտ. 28. թ. 839 Մինոգը լսեց Երևանի Կոնսիստորիայի 1911 թ. օգոստոսի 31-ի № 6720 յայտարարութիւնը Կարսի շրջանի Բուլանուխ գիւղացի Աղէքսանդր Յակոբեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ յիշեալ Յակոբեանին և առաջադրել Երևանի փոխ-թեմակալին ձեռնադրել նորան քահանայ Բուլանուխ գիւղի համար։